

Հարգելի պարոն Շահգելյան

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում և 2009 թվականի գերակա խնդիրների ցանկում թյուրիմացաբար ներառված են սեյսմիկ պաշտպանության ոլորտի՝ ՍՊԱԾ գործակալության կողմից չներկայացված խնդիրներ, խնդրում եմ Ձեր աջակցությունը 2009 թվականի գերակա խնդիրների ցանկից ներքոհիշյալ կետերը հանելու համար.

1. «Հայաստանում երկրաբանական, երկրաֆիզիկական, երկրաքիմիական դիտարկումների ցանցերի վերականգնում և զարգացում,

Հայաստանում բարձր սեյսմիկ վտանգի և ռիսկի գործում սեյսմիկ ցանցի վերականգնում և զարգացում,

Երկրի և տարածաշրջանի գիտնականների, կառավարման մարմինների, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում վորոշում ընդունող անձանց միջև համագործակցության հաստատում»,

2. «Հնարավոր ուժեղ երկրաշարժերից արդյունավետ պաշտպանություն և բնակչության օպերատիվ տարահանում»,

3. «Բնակչության տեղեկատվության բարձրացում երկրաշարժից պաշտպանվելու ուղղությամբ»:

Կից ներկայացնում եմ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գերակա խնդիրների ցանկից երեք կետ հանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

ՊԵՏ

Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«___» «_____» 200 թվականի _____
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ
ԽՆՂԻՐՆԵՐԻ ՑԱՆԿԻՑ ԵՐԵՔ ԿԵՏ ՀԱՆՆԵՒՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության կառավարություն 15.01.2009թ. N 40-Ն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագրը և 2009 թվականի գերակա խնդիրները հաստատելու մասին» որոշմամբ հաստատված հավելված N 2-ում ներառված են սեյսմիկ պաշտպանության ոլորտի կրկնվող հարցեր՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գերակա խնդիրների ցանկից հանել ներքոհիշյալ կետերը.
 - 1) «19. Հայաստանում երկրաբանական, երկրաֆիզիկական, երկրաքիմիական դիտարկումների ցանցերի վերականգնում և զարգացում, Հայաստանում բարձր սեյսմիկ վտանգի և ռիսկի գործում սեյսմիկ ցանցի վերականգնում և զարգացում, Երկրի և տարածաշրջանի գիտնականների, կառավարման մարմինների, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում վորոշում ընդունող անձանց միջև համագործակցության հաստատում»,
 - 2) «20. Հնարավոր ուժեղ երկրաշարժերից արդյունավետ պաշտպանություն և բնակչության օպերատիվ տարահանում»,
 - 3) «22. Բնակչության տեղեկատվության բարձրացում երկրաշարժից պաշտպանվելու ուղղությամբ»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ՝

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՑԱՆԿԻՑ ԵՐԵՔ ԿԵՏ ՀԱՆԵՆՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ՓՈՓՈԽՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագծի ընդունումը բյուջեում փոփոխություններ կատարելու
անհրաժեշտություն չի առաջացնում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՑԱՆԿԻՑ ԵՐԵՔ ԿԵՏ ՀԱՆՇԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և
փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՑԱՆԿԻՑ ԵՐԵՔ ԿԵՏ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագիծը ներկայացվում է, նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության ուղարկված և Հայաստանի Հանրապետության կառավարություն 15.01.2009թ. N 40-Ն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագրը և 2009 թվականի գերակա խնդիրները հաստատելու մասին» որոշմամբ հաստատված հավելված N 2-ում թյուրիմացաբար ներառված են ՍՊԱԾ գործակալության կողմից չներկայացված, սեյսմիկ պաշտպանության ոլորտի կրկնվող խնդիրներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ

Նախագիծը մշակել են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «ՍՊԱԾ» գործակալության համակարգի հետևյալ աշխատակիցները՝ Ա. Անտոնյանը, Հ. Պետրոսյանը, Ռ. Բաղդասարյանը: